Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-1169-17.10.2025-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 443-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Ապօրինի հարստանալը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը, պարտավորությունների նվազումը կամ ծախսը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով, եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցանքի հատկանիշները բացակայում են՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Սույն հոդվածի իմատով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ են համարվում «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք, նրանց ընտանիքի անդամները, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո՝ երկու տարվա ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով իրավիճակային հայտարարագիր ներկայանցող պաշտոնատար անձինք:»:

Հոդված 2. Օրենսգրքի 444-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ հայտարարագիր չներկայացնելը.»:

2) 1-ին և 2-րդ մասերում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի հավելված N 1-ում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Երկրորդ ընթերցում

Կ-1169-17.10.2025-ՊԻ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության ~~2021 թվականի մայիսի 5-ի~~ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 443-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

~~443-րդ հոդվածի 1-ին մասում կատարել հետեւյալ փոփոխությունները.~~

~~1) «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝» բառերը՝ փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» բառերով:~~

~~2) «եւ (կամ)» բառերը փոխարինել «, կամ» բառերով:~~

«1. Ապօրինի հարստանալը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը, պարտավորությունների նվազումը կամ ծախսը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով, եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցանքի հատկանիշները բացակայում են՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Սույն հոդվածի իմաստով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ են համարվում «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք, նրանց ընտանիքի անդամները, «Կուսակցությունների

մասին» սահմանադրական օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո՝ երկու տարվա ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով իրավիճակային հայտարարագիր ներկայանցող պաշտոնատար անձինք:»:

Հոդված 2. Օրենսգրքի 444-րդ հոդվածում կատարել հետեւյալ փոփոխությունները.

1) վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ հայտարարագիր չներկայացնելը.»

2) 1-ին եւ 2-րդ մասերում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի հավելված N 1-ում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1169-17.10.2025-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**Կառավարություն**	**Նախագծի վերնագիր**	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրերն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին»՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	**Կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը առ այն՝	Ընդունվել է	Ընդունվել է

			«Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն»:		
3.	**Կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 443-րդ (ապօրինի հարստանալը) և 444-րդ (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ հայտարարագիր չներկայացնելը) հոդվածներում կատարել փոփոխություններ՝ նախատեսելով, որ դրանցով նախատեսված հանցակազմերի սուբյեկտները Հանձնաժողով	Ընդունվել է	Ընդունվել է

			հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք են: Հարկ է նկատել, «Հանրային ծառայության մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքների և «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի կարգավորումների համաձայն՝ Հանձնաժողովին հայտարարագիր ներկայացնելու պարտականություն են կրում հետևյալ անձինք՝ 1) պետական պաշտոն զբաղեցնող անձինք, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարների, 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն		

			զբաղեցնող անձինք, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի, Երևան համայնքի ավագանու անդամների, քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնող անձինք, արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը, զինվորական ծառայության բարձրագույն հրամանատարական և բարձրագույն սպայական պաշտոններ զբաղեցնող անձինք, հարկային, մաքսային ծառայությունների բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք, ոստիկանության, քրեակատարողական, պրոբացիայի և հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոն զբաղեցնող անձինք, Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության և դատական		

			կարգադրիչների ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք, 2) պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրված հիմնադրամների, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարները (կոլեգիալ գործադիր մարմնի անդամները), որոնք օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում Հանձնաժողովի պահանջով ներկայացնում են իրավիճակային հայտարարագիր, 3) վերոնշյալ 2 կետերով նշված անձանց (այսուհետ նաև՝ հայտարարատու պաշտոնատար անձանց) ընտանիքի անդամները, 4) կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ այդ		

			մարմնի անդամները (այսուհետ՝ կուսակցության պաշտոնատար անձինք), 5) հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո՝ երկու տարվա ընթացքում՝ Հանձնաժողովի պահանջով (իրավիճակային հայտարարագիր), 6) հայտարարատու պաշտոնատար անձի կամ կուսակցության պաշտոնատար անձի կամ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք, հայտարարագրված կամ հայտարարագրման ենթակա գործարքի կողմ հանդիսացող յուրաքանչյուր անձը կամ այն անձը, որին սեփականության իրավունքով կարող է պատկանել հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող կամ		

			օգտագործվող անշարժ գույքը, տրանսպորտային միջոցը կամ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով թանկարժեք գույքը՝ Հանձնաժողովի պահանջով (իրավիճակային հայտարարագիր): Հարկ է նկատել, որ Հանձնաժողովին հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող՝ թվարկված ոչ բոլոր անձինք պետք է ենթակա լինեն քրեական պատասխանատվության ապօրինի հարստանալու արարքի կատարման համար: Այսպես, վերոնշյալ 6-րդ կետով նկարագրված անձանց նկատմամբ ապօրինի հարստանալու համար քրեական պատասխանատվության նախատեսումը նպատակահարմար չէ՝ նկատի ունենալով, որ վերջիններս հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կարող են կրել միայն այն դեպքերում, երբ հայտարարագրերի վերլուծության		

			արդյունքում Հանձնաժողովի մոտ մնում են կասկածներ, որ հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անդամի և կուսակցության պաշտոնատար անձի գույքի էական փոփոխությունը կամ ծախսը ողջամտորեն չի հիմնավորվում օրինական եկամուտներով, կամ վերջիններիս մոտ առկա է չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրն օրինական կամ արժանահավատ չէ: Այլ խոսքերով, նշված անձանցից իրավիճակային հայտարարագիր ներկայացնել պահանջելու՝ Հանձնաժողովի իրավասությունը ուղղված է ոչ թե այդ անձանց, այլ հայտարարատու պաշտոնատար անձանց, նրանց ընտանիքի անդամների և կուսակցության պաշտոնատար անձանց գույքային դրության գնահատման: Միաժամանակ, ապօրինի հարստանալը հաշվետու ժամանակահատվածում գույքի		

			ավելացումը կամ պարտավորությունների նվազումը կամ ծախսն է, որն էականորեն գերազանցում է անձի օրինական եկամուտները և ողջամտորեն չի հիմնավորվում դրանցով: Ըստ այդմ, քանի որ նշված անձանցից (*բացառությամբ այն հայտարարատու պաշտոնատար անձանց, ովքեր իրավիճակային հայտարարագիր են ներկայացնում պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո՝ երկու տարվա ընթացքում՝ Հանձնաժողովի պահանջով*) իրավիճակային հայտարարագիր պահանջելու նպատակը նրանց գույքի ավելացման կամ պարտավորությունների նվազման կամ ծախսի հիմնավորվածության գնահատումը չէ, կարծում ենք, որ նպատակահարմար չէ նաև այդ անձանց ապօրինի հարստանալու հանցակազմի սուբյեկտների թվում սահմանելը: Միաժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ «Կուսակցությունների		

			մասին» Սահմանադրական օրենքի 28.1.-րդ հոդվածի համաձայն. *«1. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամները (այսուհետ նաև՝ հայտարարատու պաշտոնատար անձինք) պարտավոր են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր, որի ձևանմուշը և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:* *2. Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնը ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրեր:* *3. Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերը ներկայացնելու կարգի նկատմամբ*		

			կիրառելի են «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքների համապատասխան նորմերը, բացառությամբ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների կողմից իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ ներկայացնելու պարտականության և պատասխանատվության վերաբերյալ դրույթների:» «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն. «*5.1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքերում անձինք մեկամսյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր: Հայտարարատու պաշտոնատար*		

			անձը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքում պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո՝ երկու տարվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով իրավիճակային հայտարարագիր չներկայացրած անձը համարվում է հայտարարագիր չներկայացրած կամ ժամկետի խախտմամբ ներկայացրած: *(…)* *11. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անդամի, ինչպես նաև սույն հոդվածի 5.1-ին կետով սահմանված դեպքերում հայտարարագրերը սույն օրենքի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից*		

			սահմանված պահանջների, կարգի և ժամկետների պահպանմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով չներկայացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն»: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի համաձայն. «*1. Հանձնաժողովը* *(…)* *3) վարում է հայտարարատու պաշտոնատար անձանց, այդ թվում «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով նախատեսված՝ կուսակցությունների ղեկավար մարմինների պաշտոնատար անձանց և հայտարարագրերի, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների նվերների հաշվառման ռեեստրները.*»: Վերոգրյալը, նշանակում է, որ կուսակցությունների ղեկավար		

			մարմնի անդամները, հանրային ծառայող չհանդիսանալով հանդերձ, հայտարարագիր ներկայացնելու պարտականության մասով հավասարեցված են հանրային ծառայողներին և այն ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Մասնավորապես, կուսակցության ղեկավար մարմնի անդամները Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին պարտավոր են ներկայացնել գույքի և եկամուտների հայտարարագիր «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքներով սահմանված ձևաչափով և կարգով: Այսինքն՝ թե՛ կուսակցության ղեկավար անդամները (բացառությամբ ընտանիքի անդամների վերաբերյալ որոշ դրույթների), թե՛ հանրային ծառայողները ենթարկվում են նույն հայտարարագրման ընթացակարգին:		

			Այլ կերպ, հայտարարագրային վերահսկողության տեսանկյունից կուսակցության ղեկավար մարմնի անդամները նույն իրավական ռեժիմի ներքո են, ինչ հանրային ծառայողները: Այսպիսով՝ կուսակցության ղեկավար անդամների նկատմամբ կիրառվում են նույն հայտարարագրային և հակակոռուպցիոն վերահսկման մեխանիզմները, ինչ հանրային ծառայողների նկատմամբ, որպիսի համարժեք իրավական կարգավիճակը, հատկապես հանրային վերահսկողության ենթակայության տեսակետից, առաջացնում է հիմք՝ նրանց ևս հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտների շրջանակում ներառելու համար: Ըստ այդմ, Օրենսգրքի 443-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերի սուբյեկտային կազմի հստակ տարանջատման նպատակով առաջարկում ենք		

			Օրենսգրքի 443-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով՝ նախատեսելով, որ նշված հոդվածի իմաստով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ են համարվում «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք, նրանց ընտանիքի անդամները, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո՝ երկու տարվա ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով իրավիճակային հայտարարագիր ներկայացնող պաշտոնատար անձինք: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել		

			և շրջանառվել է ««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով առաջարկվում է պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրված հիմնադրամների, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարների (կոլեգիալ գործադիր մարմնի անդամները), ինչպես նաև «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածով սահմանված Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի, Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի և Ուսումնական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամների համար սահմանել գույքի, եկամուտների, շահերի և		

			ծախսերի տարեկան, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու և դադարեցնելու հայտարարագրեր ներկայացնելու պարտականություն, ՀՀ քրեական օրենսգրքի 443-րդ հոդվածի 3-րդ մասում վերջիններիս՝ որպես սուբյեկտ նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է՝ հաշվի առնելով, որ մեջբերված նախագծի ընդունման պարագայում հիշյալ անձինք դառնալու են քննարկվող հանցակազմի սուբյեկտ:		